ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 5-Ա

«23» հունվարի 2020 թվականի գյուղ Ամասիա

ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6,57 ՀԵԿՏԱՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԸՆԴԵՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2,27 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին 2-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով «ՈՒՐԱԼ ԱՐՆԱՇ ՍՏՐՈՅ» սահմանափակ պատասխանատվության ընկերություն տնօրենի 2020 թվականի հունվարի 15-ի գրությունը՝ ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով հողամաս տրամադրելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող 6,57 հեկտար գյուղատնտեսական նշանակության և 2,27 հեկտար արդյունաբերության ու ընդերքօգտագործման հողամասերը ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել «Ուրալ Արնաշ Ստրոյ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը (հետագայում՝ Ընկերություն):

2. Ընդերքի հետախուզական աշխատանքների իրականացման համար ժամկետ սահմանել 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերում ընդերքի հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար վարձավճարի ամսական չափը սահմանել 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանին

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել հողամասի հետախուզական աշխատանքներ կատարելու իրավունքի տրամադրման պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 6	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ			
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝			
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝			
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝			
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝			
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«23» հունվարի 2020 թվական
գյուղ Ամասիա